

Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵԼ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Դշ. 1 Ապրիլ - Միջինք Մեծ Պահոց: Այսօր սկսան ստեղի Շարականներու երգեցողութեանի կեսօրէ ետք, «խաղաղական» ժամերգութեան աւարտին:

Եշ. 2 Ապրիլ - ՀԱԿՈՒՄԻՆ ի Ս. Յակոբ բարողց Գերշ. Տ. Սեւան Նայ. Ղարիբեան: Բացատրեց թէ ինչո՞ւ, ինչպէ՞ս եւ ե՞րք պէտք է աղօրել Աստուծոյ:

Ուր. 3 Ապրիլ - Վաղուան 40 մանկանց տօնին առիբով, երեկոյեան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ ՀԱԿՄԱՆ մասնաւոր արարողութիւն, որուն ընթացքին բարողց Հոգ. Տ. Անուշաւան Շ. Վրդ. Զղշանեան, ընելով նաեւ պատմականը բառանից նահատակութեան:

Շր. 4 Ապրիլ - Ս. Քառասուն Մանկանց Սեբաստիոն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գիշատիիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Աւետիս Արդ. Խիրանեան: Վերաբերումը կատարուեցաւ 40 Մանկանց նկարին առջեւ շտկուած սեղանին վրայէն, որուն դիմացը, կաթսայի մը մէջ, կը պլայային 40 գոյնզգոյն կաներնենք, աւանդական սառցապատ լինը խորհրդանշող:

- Կեսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր զինաւորութեամբ, Միարանութիւնը մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանին եւ Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցաւ ժամերգութիւն եւ նախատօնակ: Նպա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր բափօր Տաճարէն ներս, բափօրապետն էր Հոգ. Տ. Աւետիս Արդ. Խիրանեան:

Կիր. 5 Ապրիլ - Դատաւորին: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Լուսաւորիչ: Ապա, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, բարողց՝ վերլուծելով Դատաւորի՝ ինչպէս նաեւ Փարիսեցի եւ Մաքսաւորի առակները, եւ նախագահեց Սրբայրին եւ Պատանատեղույն շուրջ կատարուած եռադարձ բափօրին, որ աւարտեցաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Դշ. 7 Ապրիլ - ՀԱԿՈՒՄԻՆ ի Ս.

Հրեշտակապետ բարողց Հոգ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան, խօսելով կեղծաւորութեան մոլութեան մասին եւ յայտնելով թէ Մեծ Պահոց շրջանին մասնաւորաբար Քրիստոնեայէն կը պահանջուին երեք բաներ - ապաշխարութիւն, ծումապահութիւն կամ պահեցողութիւն եւ աղօրէ: Շեշտեց անոնցմէ իւրաքանչիւրին կարեւորութիւնը:

Եշ. 10 Ապրիլ - Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպաս -:

Շր. 11 Ապրիլ - Ս. Գր. Լուսաւորչին (Մուտքի Վիրաց): Առաւօտեան ժամերգութեան աւարտին, Լուսարարապետ Սրբազնին ձեռամբ Ս. Լուսաւորչի մասունքը բափօրով փոխադրուեցաւ Աւագ Սեղան: Ս. Պատարագը մատուցուեցաւ աւանդատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 12 Ապրիլ - Գայստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ բաղաժիս Արեւմտեան (երեական) բաժնին մէջ գտնուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Անուշաւան Շ. Վրդ. Զղշանեան, որ իրքի նախա-Հայֆայի հովիւ, Տեսուչը կը նկատուի յիշեալ աղօրատան: Բարողց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպաս-, խօսելով երեկուան տօնին - Ս. Լուսաւորչի չարչարանքներուն ու վիրապամուտին մասին:

Դշ. 14 Ապրիլ - Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ վերջին ՀԱԿՈՒՄԻՆ բարողց Տ. Անապմիկ Վրդ. Պօղոսեան: «Երէ որդի Հոգ. Տ. Աստուծոյ, ըսէ որ բարերը հաց ըլլան»:

Եշ. 16 Ապրիլ - Մեծ Պահոց վերջին ՀԱԿՈՒՄԻՆ ի Ս. Յակոբ բարողց Հոգ. Տ. Անապմիկ Վրդ. Ցովակիմեան, թնարան ունենալով «Լուսովդ բով, Քրիստոս, ամենեքեան լուսաւորեցաք . . .»:

Ուր. 17 Ապրիլ - Խ. օր մեծ պահոց: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Արեւագալի», իսկ կեսօրէ ետք՝ «Խաղաղական»ի վերջին ժամերգութիւնը:

Շր. 18 Ապրիլ - Ֆիշատակ յարութեան Դագարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դուրէն Գիշատիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Անուշաւան:

Վրդ. Յովակիմեան:

- Կեսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միարանութիւնը «Հրաշափառով» մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու Մաղկագարդի նախատօնակը, մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տեօդինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր բափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգչ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 19 Ապրիլ.- Մաղկագարդ. Գիշերային եւ առաւտեան ժամերգութիւնները պաշտուեցան եւ Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Բագրատ Արդ. Պուրեմէեան: Ապա կատարուեցաւ մեծահանդէս բափօր Ս. Գերեզմանին շուրջ, եւ «Անդաստան»: Մեր բափօրին կը հետեւէին Ղատոց եւ Աստրոց բափօրները: Թափօրականք ի ձեռին ունեին արմատնեաց եւ ճիրեննեաց ոստեր: Կանք դարձին Հայոց բաղի մուտքէն, «Որ զինորիուր քո գալստեան» շարականն երգելով Միարանութիւն եւ դպիրներ յառաջացան եւ բարձրացան Պատրիարքան:

- Կեսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան» եւ ապա ժամերգութիւն ու կարգ Դոնքացէքի, հանդիսափետութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր: Հոգչ. Տ. Գուսան Վրդ. կարդաց վարագոյր բացող մօտ 40 անձերու անունները: Կատարուեցաւ նուիրահաւատք՝ Ազունիէին (Արանան) ազգ բուժարանի համար:

Բշ. 20 Ապրիլ.- Աւետում Ս. Աստուածածին: Առաւտուն, Գերշ. Տ. Սեւան Եպս. գլխաւորութեամբ, Միարան Հայրեր ինքնաշարժերով իշան Գերսեմանիի ծորը ու «Հրաշափառով» մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարազը մատոյց Գերշ. հանդիսափետ Սրբազնը:

Գշ. 21 Ապրիլ.- Աւագ Երեշշաբթի: Ըստ սովորութեան, Ս. Պատարազ մատուցուեցաւ Ս. Յարութեան գարեին վրայ բացուղ Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Գուսան Վրդ.

Ալճանեան, որ ապա գլխաւորեց Տաճարէն ներս կատարուած «Ուխտաւորաց բափօրը»: Ս. Թարգմանչաց Վարժարանի աշակերտութիւնը (եւ ուսուցիչներէն ումանի) ստացան Ս. Հաղորդութիւն:

Եշ. 23 Ապրիլ.- Աւագ Հինգշաբթի (Յիշաւտակ Ընթեաց): Առաւտեան ժամերգութեան աւարտին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան»: Ս. Պատարազը Աւագ Սեղանին վրայ մատոյց Լուսարապակետ Գերշ. Տ. Դաւիթ Արքապ. Սահական եւ կարդաց, աշխարհարար լեզուով, Ս. Բարսեղ Հայրապետի Ս. Հաղորդութեան նաուը:

- Կեսօրէ ետք, Մայր Տաճարի գոյց դասերն ալ լեցուած էին օտար բարձրաստինան հիւրերով, որոնց կարգին Երուսաղեմի քաղաքապետ Վսիմ. Թէտի Քոլլէ եւ Հիւպատոսներ: «Ունելուայ»ի տպաւորիչ կարգը կատարեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Արարողութեան աւարտին, Անկիլիան Եպիսկոպոս մը Անգլերէն լեզուով Աւետարան կարդաց:

- Ժամ մը ետք, Հոգչ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զոջանեանի գլխաւորութեամբ, բափօրական գնացքով այցելութիւն տրուեցաւ Քրիստոսի գոյգ բանտերուն, - Աննա Քահանայապետի բնակարանի տեղույն վրայ կառուցուած Ս. Հրեշտակապետաց եկեղեցին եւ Կայիշափա Քահանայապետի տեղույն վրայ կառուցուած Ս. Փրկիչ եկեղեցին: Հոգչ. Հայրը տուալ պատմական բացատրութիւնները: Հոգեհանգիստ կատարուեցաւ Ս. Արոնոյս Հանգուցեալ Պատրիարքաց դամբարաններուն եւ ապա Տ. Եղիշէ Տէրտէրեան Պատրիարքի հողակոյտին վրայ:

- Գիշերը Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Խաւարման», որու ընթացքին, համատարած մուրին մէջ, տպաւորիչ բարող մը խօսեցաւ Ամերիկայէն հիւրարար Ս. Արոն ժամանած Տ. Արտէն Ա. Քինը. Աշեանը: Հանդիսափետն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը:

Ուր. 24 Ապրիլ.- Աւագ Ուրբաթ (Յիշաւակ Խաչելութեան) 77րդ տարեդարձ Ապրիլեան Եղինը: Կեսօրը ժիշ անց, Ս. Յարութեան Տաճարի մեր-

վերնամատրան մէջ կատարուեցաւ «Կարգ Խաչելութեան», հանդիսապետութեամբ Գերշ. Տիրեղ Եպս. Գարիկեանի:

- Կեսօք ետք, Մայր Տաճարին մէջ, խուռն բազմութեան Ծերկայութեան կատարուեցաւ «Թաղման կարգ»: Հանդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայոք:

Եր. 25 Ապրիլ.- Աւագ Հաքար (ճրագալոյց Ս. Զատկի): Ըստ սովորութեան, առաւտեան ժամը 9ին, Ս. Յարութեան Տաճարի դրուր բացուեցաւ մեր կողմէ, բանալին առնելով Աւագ բարգման Հոգը. Տ. Ռազմիկ Վրդ. Պորոսեանի ձեռքէն:

- Ժամը 11ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայոք, ի գլուխ Միարանութեան, մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, որ լեցուն էր բազմազգի հաւատացեամերու բազմութեամբ: Այս տարի շատ մեծ էր թիւը Յոյն ուխտաւորներուն թէ Յունաստանէն եւ թէ մանաւանդ Կիպրոսէն ժամանած: Կային նաև Ղպտիներ ու փոքր թիւով Ասորիներ ու Հայեր: Յունաց Ամեն. Տ. Տիոտորոս Ս. Պատրիարքին հետ Ս. Գերեզման մտաւ մեր լուսահանը՝ Հոգը. Տ. Ռազմիկ Վրդ.: Հինգ վայրկեան ետք, երբ լոյսը դուրս կու գայ Ս. Գերեզմանի պատուհանէն, գուարրօրէն կը սկսին դողանչել Տաճարին բոլոր - Յունական եւ Հայկական - զանգերն ու կրշնակները: Լուսահան Հայր Սուրբին գլխաւորութեամբ բափօր կը կազմուի, հետևողութեամբ Ղպտոց եւ Ասորոց: Թափօրը երից կը դառնայ Ս. Գերեզմանին շուրջ, “Քրիստոս Յարեա” ը երգելով: Ժամը 3.30ին Միարանութիւնը Կանք կը վերադասնայ: Դարիք բերդին դիմաց, Պատրիարք Սրբազն եւ լուսահան վարդապետը կը զգեստաւորուին եւ Յարութեան շարականներ երգելով բափօրը կը յառաջանայ ու մուտք կը գործէ Մայր Տաճար, ուր Պատրիարք Սրբազն յարութեան աւետիսով կ'արձակէ ժողովուրդը:

- Ժամ մը ետք, Ճրագալոյցի արարողութիւնը կը սկսի ի Ս. Յակոբ, որուն աւարտին Արժ. Տ. Արտէն Ս. Քինյ. Աշնեան կը մատուցանէ Ճրագալոյցի Ս. Պատարագ Աւագ Սեղանին վրայ: Գերշ. Տ. Կիրեղ Եպս. նախագահեց Ս. Զատկի մասնակին: Յետոյ,

“Այսօր յարեաւ” շարականը երգելով, բոլորն ալ բարձրացան վանդի սեղանատունը՝ ընթրիֆի:

Կիր. 26 Ապրիլ.- ԶԱՏԻԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ: Կէս գիշերը երկու ժամ անցած մայրավանքի զանգը կը հնչէ: Գերշ. Տ. Կիրեղ Եպս. ի գլխաւորութեամբ, Միարանութիւնը կը մեկնի Ս. Յարութեան Տաճար: Յունաց արարողութեան աւարտին, ժամերգութիւնները կը շարունակուին Ս. Գերեզմանի շրջափակին մէջ, հետեւողութեամբ Ղպտոց եւ Ասորոց բափօրներուն: Ցերեկին Գերշ. Տ. Կիրեղ Եպս. մատոյց օրուան հանդիսաւոր Սուրբ Պատարագը Քրիստոսի Գերեզմանին վրայ եւ բարողեց: Արարողութեան կարեւոր մասը ձայնափուեցաւ Խրայէեան Ռատիօկայանէն: Ներկայ էր Ամեն. Ս. Պատրիարք Հայոք: Վանք դարձին, Յարութեան շարականներու երգեցնորդեամբ, Միարանութիւնը յառաջացաւ Հայոց թաղի մուտքէն եւ բարձրացաւ Պատրիարքարան:

- Կեսօք ետք, Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուեցաւ Զատկական մեծ “Անդաստանը”, հանդիսապետութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

Բշ. 27 Ապրիլ.- Բ. օր Ս. Զատկի - Յիշատակ Մեռելոց: Ըստ սովորութեան, Ամեն. Ս. Պատրիարք Հայոք հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ եւ բարողեց Յարութեան խորհութիւն շուրջ: Ս. Պատարագէն ետք, Ն. Ամենապատութիւնը, ամպիունի տակ եւ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, նախագահեց եռադարձ բափօրին: Վարդապետներ ի ձեռին ունեին Սրբոց մասունքներ: Աւարտին “Ճանապարհը” երգուեցաւ ուխտաւորաց համար: Յետոյ բոլորն ալ Պատրիարքարան բարձրացան, երգելով “Քրիստոս Յարեա” շարականը: Հոն Ս. Պատրիարքը իր օրինութեամբ արձակց ամենքը եւ բոլորին բաժնեց Ս. Պատարագի նշար:

Բշ. 28 Ապրիլ.- Գ. օր Ս. Զատկի: Մայր Տաճարի Ս. Գլխադիրի մատրան մէջ պատարագեց Տաճարի Ս. Վանդի մատրան մէջ պատարագեց Տաճարի Ս. Վանկասարեան: Ապա, Հոգը. Տ. Վանքիկ Վրդ. Մանկասարեան: Ապա, երանաշնորհ Տ. Կիրեղ Եպս. նախագահեց խնդրամատոյց ուխտաւորներու հանգուցեալ հարազատներու հոգւոց համար կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին: Նոյնը

կրկնուցաւ Տաճարին գաւթին մէջ, երանաշնորհ Տ. Կիւրեղ Բ. Պատրիարք Հօր շիրմին մօտ:

Ծր. 2 Մայիս.- Գլխատումն Յովիաննու Կարապետին: Ա. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Ա. Գլխադրի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Համբարձում Վրդ. Քէշշեան:

Կիր. 3 Մայիս.- Նոր Կիրակի (Կրկնազատիկ - Յիշատակ Լահատակաց): Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Լուսահան Հոգչ. Տ. Ռազմիկ Պողոսին: Քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս., խօսելով Նոր Կիրակիի իմաստին եւ նահատակաց Օրուան շուրջ, որոնց համար կատարուած հոգիանգստեան պաշտամունքին նախագահեց Ամեն. Ա. Պատրիարք Հայրը:

Ծր. 9 Մայիս.- Ա. Պատարագը մատուցուցաւ ի Ա. Գլխադիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Բագրատ Արդ. Պուրենեան:

- Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս. Սահակեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ա. Յարութեան Տաճար, ուր պաշտուցան ժամերգութիւնն ու նախատօնակը մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր բափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգչ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 10 Մայիս.- Աշխարհամատրան (Կանաչ) Կիրակի: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուցան ի Ա. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ապա, Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս. հանդիսաւոր Ա. Պատարագ մատոյց Քրիստոսի Ա. Գերեզմանին վրայ, բարոզեց եւ նախագահեց Սրբավայրին առջեւ կատարուած «Անդաստան»ին, որով փակուցան Զատկական շրջանի տօնական հանդիսութիւնները համարիատոնեական Սուրբ Տաճարէն ներս:

Ծր. 16 Մայիս.- Ա. Պատարագը մատուցուցաւ ի Ա. Գլխադիր: Ժամարարն էր հիւրարար Ա. Արոն ժամանած Ա. Էջմիածնի Միաբան եւ Ֆրանսայի մէջ պաշտօնավարող Հոգչ. Տ. Միւռոն Վրդ. Գրվագեան: Հոգչ. Հօր

հետ Ֆրանսայէն ժամանած էր ուխտաւորմերու խումբ մը, որոնց բանի մը խօսք ըրաւ Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս. որ իր կարգին ատեն մը պաշտօնավարած է Ֆրանսաւ:

Կիր. 17 Մայիս.- Կարմիր Կիրակի: Ա. Պատարագը մատուցուցաւ Ա. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Անուշաւան Շ. Վրդ. Զոյսանեան:

Ծր. 23 Մայիս.- Ա. Պատարագը մատուցուցաւ ի Ա. Գլխադիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռուրեն Վրդ. Ցովակիմեան:

Կիր. 24 Մայիս.- Տօն Երեւման Ս. Խաչ (351): Առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Մայր Տաճարին մէջ, Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս. աշխարհարող կարդաց Ս. Կիւրեղ Հայրապետի Կոստանդ Կայսեր յիած Թուղթին բարգմանութիւնը. Ա. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց Հոգչ. Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէթեան: Խորանին վրայ կը տեսնուէր վառ կանքեղներով զարդարուն Ա. Խաչին Շշանը:

Ծր. 30 Մայիս.- Ա. Պատարագը մատուցուցաւ ի Ա. Գլխադիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 31 Մայիս.- Ա. Պատարագը մատուցուցաւ ի Ա. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսին:

Դշ. 3 Յունիս.- Վարուան Համբարձման տօնին առիթով, կէսօրէ ետք, Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով բարձրացան Զիրենեաց լեռ, ուր Համբարձման Սրբավայրին վրայ կառ ուցուած մեր վերնամատրան մէջ պաշտուցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

- Իրիկնադէմին նոյն վայրին մէջ կատարուեցաւ Հակման եւ Գիշերային ու Առաւօտեան ժամերգութիւններ, որմէ ետք Միաբանութիւն եւ աշակերտութիւն վերադարձան Մայրավանք:

Եշ. 4 Յունիս.- ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏԵԱՌՈՒ: Առաւօտուն, Ամեն. Ա. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերով բարձրացաւ Զիրենեաց լեռ ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Համբարձման

Սրբատեղին, ուր մեր վրանամատրան մէջ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Գերշ. Տ. Սեւան Եպս., որ արարողութեանց աւարտին նախագահեց Սրբավայրին առջեւ կատարուած «Անդաստան»ին: Խոկ Ամեն. Ս. Պատրիարք «Համաստան»ին: Հայր նախագահեց Մայր Արքոոյ Սիսէն Ս. Համբածին փոխադրութեան տարեդարձի առքիւ կատարուած «Հայրապետական Մայրանք»ին:

Եր. 6 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի տանիքին վրայ գտնուող Ս. Համբարձում մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աւետիս Արդ. Խիրանեան:

- Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ պաշտուած Բ. Շաղկազարդի նախատօնակին նախագահեց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Կիր. 7 Յունիս.- Երկրորդ Շաղկազարդ: Առաւոտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Եր. 13 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի տանիքին վրայ գտնուող Ս. Առաքելոց մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

- Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Մայր Տաճարի մէջ պաշտուած Հոգեգալստեան հանդիսաւոր նախատօնակին:

- Երիկնադէմին, ի Ս. Յակոբ պաշտուած «Եկեսցէ»ի եւ Հոգման կարգերուն նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

Կիր. 14 Յունիս.- ՀՈԳԵԳԱԼՍՏՈՒՄ (Պետակոստէ) եւ Բարեկենդան Եղիական Պահոց: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց, աւուր պատշաճի քարոզեց եւ Ս. Յովի. Ռոկերերանի Հոգեգալստեան ներքոյի մէկ մասը կարդաց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը:

- Կէսօրէ ետք, ժամերգութիւնը պաշտուեցաւ Սիննի Վերշին Ընթրեաց Վերնատան մէջ, գլխաւորութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս. Սահակեանի, որ, արարողութեան աւար-

տին, բացատրութիւններ տուաւ Սրբավայրի մասին: Ապա բոլորն ալ ուղղուեցան Ս. Փրկչի վանքը, որուն գաւթին մէջ հոգեհանգիստ կատարուեցաւ հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար:

Եր. 20 Յունիս.- Է. օր Հոգեգալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլուհոդիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 21 Յունիս.- Յիշատակ Եղիայի Մարգարեին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբեն Վրդ. Յովակիմեան:

- Ս. Հոյրիսիմեանց նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Բշ. 22 Յունիս.- Ս. Կուսանացն Հոյրիսիմեանց: Առաւոտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, խոկ Ս. Պատարագը մատուցուեցաւ աւանդատան՝ Ս. Հոյրիսիմէի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Բշ. 23 Յունիս.- Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս. Սահակեան բահանայական պատարագ մատոյց Գերեսմանի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, իր ձեռնադրութեան 35-ամեակին առիրով:

Երեկոյին Լուսարարապետարանին մէջ, Ամեն. Սրբազն Պատրիարք Հայրը եւ Սիարաբնութեան հոգեւորական անդամները միասին ընթրեցին, եւ երկար ու առողջ տարիներու իրենց բարի մաղրանքները յայտնեցին:

Ուր. 26 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս.

Եր. 27 Յունիս.- Ս. Գր. Լուսաւորիչ (Ելն ի Վիրապէն): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Ելրաբենեան:

- Մայր Տաճարին մէջ պաշտուած նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց -

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Յետոյ ծնբադիր «Տէր Ողորմեա» երգութցաւ:

Կիր. 28 Յունիս.- Տօն Կարուղիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Հոգ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց «Հայրապետական Մադրանք»ի արարողութեան:

Կեսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»ին նախագահեց Գերշ. Տ. Սեւան Նպա. Ղարիպեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ուր. 3 Ապրիլ.- Լուտերականներու Գերմանիոյ Եպիսկոպոսը կեսօրին այցի եկաւ Պատրիարքան:

- Երեկոյեան, Հոգ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Աներկայ եղաւ Պէրլինի Եպիսկոպոսին ի պատիւ Նօրբ Տամի Հիւրանոցի մէջ տրուած ընդունելութեան Աներկայ եղան Հոգ. Տ. Գուսան, Ռազմիկ Վրդ. Աներ, Տ. Բագրատ Արեդայ եւ Գ. Հինդիեան:

Կիր. 5 Ապրիլ.- Երեկոյեան, Լուտերականներու սրահին մէջ, ի պատիւ Գերմանիային ժամանած Եպիսկոպոսի մը տրուած ընդունելութեան Աներկայ եղան Հոգ. Տ. Գուսան, Ռազմիկ Վրդ. Աներ, Տ. Բագրատ Արեդայ:

Դշ. 8 Ապրիլ.- Կեսօրին, Խորայէլի Պուլկարիոյ դեսպանը իր հետեւրդներով այցելեց նախ Մայր Տաճար եւ ապա Պատրիարքան:

Բշ. 13 Ապրիլ.- Կեսօրուան մօտ, Պատրիարքարան այցելեցին Ս. Զատկի առքիւ Ս. Երկիր Ժամանած Անկիլիքան քարքառատինան Եկեղեցականներ, ընկերակցութեամբ տեղուոյ Անկիլիքան Արքապան. Սամիր Քափիրիի:

Դշ. 15 Ապրիլ.- Երեկոյեան, Մոսկուայի Քաղաքապատ Կապրիէ Փօփովի ի պատիւ Քաղաքապատ Թէտիք Քոլլէքի Քաղաքապետարանի մէջ տուած ընդունելութեան Աներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքապան. եւ Գ. Հինդիեան:

Եշ. 16 Ապրիլ.- Հրէից Պատէքի (Քաղաքակերաց) տօնին առքիւ (Ծր. 18 Ապրիլին), Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորական հեռագիրներ դրկեց Խորայէլի

նախագահ Հայիմ Հերզօկի, Վարչապետ Խենք Շամիրի, Քնէւէքի (Խորհրդարան) Նախագահ Տօվ Շիլանքիի եւ Երուսաղէմի Քաղաքապետ Թէտիք Քոլլէքի:

Բշ. 20 Ապրիլ.- Ամերիկայէն ուխտաւորներու խումբով, եւ Երեցին Մարիամին ընկերակցութեամբ, Ս. Արոն Ժամանեց Արժ. Տ. Արտէն Ս. Քինը. Աշեան եւ Զատկի տօներէն ետք վերադարձաւ իր պաշտօնատեղին:

Դշ. 29 Ապրիլ.- Կեսօրէ ետք, Ռուսիայի փոխ-նախագահ Ակէսանոր Ռոշֆոյ, որ Խորայէ եկած էր այցելութեան, այցելեց Ս. Յառութեան Տաճար, որու մուտքին դիմաւորուեցաւ եղեւ յարանուանութեանց ներկայացուցիչներէն: Մեր կողմէ Աներկայ էին Գերշ. Տ. Կիւրեղ Նպա. և Տաճարին Տեսուչը՝ Գերշ. Տ. Վահարշ Նպա.:

Եշ. 30 Ապրիլ.- Ժառ. սաներ օրական Տ. Դաւիթ Արքապան. մեկնեցաւ Լիքանան, 1992-93 դպրոցական տարեշրջանի համար նոր ժառանգաւոր սաներ արձանագիրու:

Դշ. 9 Յունիս.- Ֆրանչիչսկեան Միարանութեան նոր Կիւսդոտ Հայր Ճիովիրք Նազգարօ իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

- Շա'արէյ Ցէտէք հրէական հիւանդանոցի նոր բաժնի սարքաւորման աւարտումին առիթով, կրօնից նախարարութեան կողմէ տրուած ընդունելութեան Աներկայ եղան Գերշ. Տ. Սեւան Նպա., Հոգ. Տ. Գուսան Վրդ. և Գ. Հինդիեան:

Դշ. 10 Յունիս.- Խտակիոյ Ազգային Տօնին (2 Յունիս) առքիւ, Խտալական Ընդհանուսութեան կողմէ, Հիւպատոսարանի պարտէգին մէջ սարքուած ընդունելութեան Աներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Գերշ. Տ. Կիւրեղ եւ Տ. Ս. Սեւան Սրբազններ, Աւագ Քարգման Հոգ. Տ. Ռազմիկ Վրդ. Աներ. եւ Գ. Հինդիեան:

Եշ. 11 Յունիս.- Նոյն առիթով, Խաղաքին արեւելեան բաժնին մէջ գտնուած Հիւպատոսարանը տրուած ընդունելութեան Աներկայ եղան Գերշ. Տ. Ս. Սեւան Նպա., Հոգ. Տ. Գուսան եւ Ռազմիկ Վրդ. Աներ:

Ուր. 12 Յունիս.- Ֆրանչսկան

Հիւպատոսին մեկնումին առիթով, լուսարարապես Գերշ. Տ. Դաւիթ Արքեպոս. Գերշ. Տ. Կիւրեղ Եպո. և Գ. Հինդլեան ողջերը մարդելու գացին Հիւպատոսարան:

Եր. 13 Յունիս.- Լատինաց Ս. Անտոն Փատուացոյ տօնին առբիւ, կէսօրէ առաջ, Ֆրանչիսկաններու Մայր Տաճարին մէջ, Պապական նուիրակի կողմէ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին ներկայ գտնուեցան Ս. Յարութեան Տաճարի Տեսուչ Գերշ. Տ. Վաղարշ Եպո. Խաչատուրեան և Հոգ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Եշ. 18 Յունիս.- Կէսօրին, Խրայէլ այցելող Շախկին Սովետ Միութեան վերջին Նախագահ Միխայէլ Կորպաչեւ այցելեց Ս. Յարութեան Տաճար, որու մուտքին դիմաւորուեցաւ երեք յարանուանութեանց ներկայացուցիչներու կողմէ: Մեր կողմէ ներկայ էին Գերշ. Տ. Կիւրեղ Եպո. Գարիկեան և Տաճարի Տեսուչ Գերշ. Տ. Վաղարշ Եպո. Խաչատուրեան:

Բշ. 22 Յունիս.- Կէսօրէ ետք, Անգլիոյ Եկիզապէր Բ. Թագուհոյ ծննդեան 67րդ տարեդարձին առիթով, բրիտանական Ընդհ. Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպոս., Աւագ քարգման Հոգ. Տ. Ռազմիկ Վրդ., և Գ. Հինդլեան:

Եշ. 24 Յունիս.- Կէսօրէ ետք, Հոգ. Տ. Անուշաւան Շ. Վրդ. և Աւագ քարգման Հոգ. Տ. Ռազմիկ Վրդ. ներկայ եղան Եւրոպացոյ Ս. Յովիաննես Մկրտչի տօնին առիթով, Բերդիելմի St. John the Templar եկեղեցոյ մէջ, Լատինաց Պատր. Փոխանորդ Մօնու. Քամալ Պաթիշի կողմէ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին և յաջորդող ընդունելութեան:

ՇՆՈՐՀԱԿՈՐՁԱԿԱՆՔ

Պատրիարք Սրբազն Հայրը Զատկուայ Տօնին առիթով իր քարեմաղթութեանց եւ շնորհաւորանքի գիրերը յդեց Հոգեւոր եւ Կառավարական պետերուն, որոնց շնորհաւորագիրերը ընդունած է.-

- Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Առաջին Սրբազնագոյն Կաթողիկոսին:

- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին:

- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Գարեգին Պատրիարք Գագանձեանին:

- Հռովմէշական Կաթողիկ Եկեղեցոյ Սրբազն Քահանայապետին՝ Նորին Սրբութիւն Ցովիաննես Պողոս Բ. Պապին:

- Մուսկուայի եւ Ռուսիոյ Օրթոսոքս Եկեղեցոյ Ամեն. Տ. Տ. Ալեքսէ Բ. Սրբազն Պատրիարքին:

- Թեմակալ Առաջնորդներուն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց ղեկավարներուն: